Հավելված 1

Հաստատված է համայնքի ավագանու
03.11.2018թ. N 3-Ա որոշմամբ

Կ Ա Ր Գ

Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմում համայնքային ծառայության տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից բարձր դասային աստիճան ունենալու համար պաշտոնային դրույքաչափի նկատմամբ սահմանված հավելավճարի կիրառման և դրա չափը

1. Սույն կարգով սահմանվում է Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողների զբաղեցրած պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից բարձր դասային աստիճանի համար աշխատանքի վարձատրության պաշտոնային դրույքաչափի նկատմամբ հավելավճարի կիրառման կարգը և դրա չափը:
2. Հավելավճարը սահմանվում է այն համայնքային ծառայողների համար, ովքեր «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ստացել են համայնքային ծառայության տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից ավելի բարձր դասային աստիճաններ և կիրառվում է ավելի բարձր դասային աստիճանը շնորհելու ամսվան հաջորդող ասվա մեկից:
3. Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմում համայնքային ծառայության տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից բարձր դասային աստիճան ունենալու համար հավելավճարի տրամադրման դեպքում համայնքային ծառայողի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ կիրառվում է տոկոսային ավելացում 10%-ի չափով՝ ավելի բարձր դասային աստիճանի համար, շնորհված նաև այլ համայնքների աշխատակազմերում:
4. Համայնքային ծառայության տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից ավելի բարձր դասային աստիճան ունենալու համար հավելավճարը յուրաքանչյուր ամիս վճարվում է աշխատավարձի հետ միասին՝ ընդհանուր գումարով:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Ս. Ս Ա Հ Ա Կ Յ Ա Ն**